Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :

1-19 առաջադրանքների հրահանգ _ պատասխանների թերթիկի վրա ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում նշեք X նշանը:

1. Ո՞ր մշակույթի նմուշն է ներկայացված նկարի վրա:

ɔ. Եգիպտական

b. Էտրուսկական

g. Միջագետքի

d. Էգեյան

2. Ինչպե՞ս է կոչվում ներկայացված արվեստի նմուշը:



ա. Դիպտիխ

բ. Պոլիպտիխ

գ. Տրիպտիխ

դ. Պրեդելա

3. Ո՞ր նկարագրությունը չի համապատասխանում նկարի վրա պատկերված կիրառական արվեստի նմուշի դեկորատիվ ձևավորմանը:



ա. Համաչափորեն կառուցված ձևավոր պատկերը վարպետորեն զուգակցվում է ծաղկամանի ձևին և առանձնանում է կոմպոզիցիոն կառուցվածքի ներդաշնակ բնույթով

բ. Նկարչության թեմատիկան, պատկերաքանդակների դասավորությունը և ոճավորված պատկերների յուրահատկությունը արևելյան նմուշների ազդեցության արտահայտությունն է

գ. Ձևավոր պատկերների և զարդանախշի համադրության հիման վրա ստեղծվում է անտիկ խեցեգործության հետաքրքիր նմուշ

դ. Լույսի և ստվերի շեշտակի փոփոխմամբ ծաղկամանի մակերեսին պատկերաքանդակները ձեռք են բերում ծավալային ձևեր

4. Ո՞ր տերմինով է սահմանվում մետաղի մակերեսից ստացած դրոշմանկարը:

ա. Վիմագրություն (Լիթոգրաֆիա)

բ. Փայտափորագրություն (Քսիլոգրաֆիա)

գ. Օֆորտ

դ. Լինոփորագրություն

5. Ո՞ր գեղարվեստական ձևն է օտար վրացական միջնադարյան քրիստոնեական արվեստի համար:

ա. Կլոր քանդակ

բ. Ռելիեֆ

գ. Որմնանկար

դ. Ոսկերչություն

6. Ո՞ր տերունական տոնն է արտացոլում ներկայացված արվեստի նմուշը:



ա. Պայծառակերպություն

բ. Մկրտություն

գ. Ավետում

դ. Տեառնընդառաջ

7. Ուշադիր դիտեք հրեշտակի պատկերը «Խաչի բարձրացում» կոմպոզիցիայից, որը Մանգլիսիի մայր տաճարի զարդանկարի մանրամասն է: Ի՞նչ գեղարվեստական առանձնահատկություններ են բնորոշում վրացական որմնանկարչության ներկայացված նմուշը:

ա. Պատկերի անկյունավոր, ոչ պլաստիկ շարժում

բ. Կատարելագործված, ճկուն նկարի միջոցով ստեղծված մի փոքր երկարավուն, պլաստիկ ձևեր

գ. Չափազանցված ձևեր, վառ գծային ռիթմ և դեկորատիվություն

դ. Սուր, լոկալ գույնզգույն բծերի միջոցով ստեղծված ոճականացված պատկեր

8. Ո՞ր գեղարվեստական հոսանքի նմուշն է ներկայացված լուսանկարի վրա:



ա. Սիմվոլիզմ

բ. Սյուրռեալիզմ

գ. Իմպրեսիոնիզմ

դ. Ֆովիզմ

9. Կոմպոզիցիա ստեղծելու համար ո՞ր գեղարվեստական հոսանքն է կիրառում կոմիքս, գովազդ և այլ բազմազան սպառողական արտադրանք:

ա.Պոստիմպրեսիոնիզմը

ծ. Ֆուտուրիզմը

գ. Ռեալիզմը

ջ. Փոփ արտը

10. Գույների ո՞ր զույգն է կոնտրաստային:

ա. Կարմիր - նարնջագույն

բ. Դեղին – մանուշակագույն

գ.Կապույտ–կանաչ

դ.Դեղին - նարնջագույն

11. Ինչպես եք կարծում ո՞ր տեխնիկայով է կատարված ներկայացված արվեստի նմուշը:



ա. Որմնանկար

բ. Փորագրություն

գ. Գոբելեն

դ. Մենատիպ

12. Ի՞նչ նյութ է օգտագործված ներկայացված արվեստի նմուշը ստեղծելու համար:



ա. Ջրաներկ

բ. Արծնապակի

գ. Մոմանյութ

դ. Յուղաներկ

13. 17-րդ դարի նիդերլանդացի նկարիչների պատկերելու հիմնական օբյեկտն էր հանդիսանում.

ա. Լույսի և գույնի փոխհարաբերությունը

բ. Պատկերների կատարելագործված ձևերը

գ. Աշխատանքին սեփական զգացմունքային վերաբերմունքի փոխանցումը

դ. Շրջապատող իրականությունը

14. Ի՞նչն է սահմանում զարդանախշի առանձնահատկությունը:

ա. Ֆակտուրան

բ. Գույնը

գ. Ձևը

դ.Կրկնությունը

15. Ի՞նչ առանձնահատկությամբ է տարբերվում նկարի վրա ներկայացված դիմանկարը եգիպտական քանդակների մեծամասնությունից:

ա. Վարպետը կարևորություն է տալիս խորհրդանշական պատկերներին

բ. Վարպետը կարևորություն է տալիս կոմպոզիցիոն կառուցվածքի ֆորմալ միջոցներին

գ. Վարպետը կարևորություն է տալիսիրատեսական ձևերին

դ. Վարպետը կարևորություն է տալիսերկրաչափական ձևերին

16. Անվանեք , առավելապես ո՞ր կոնկրետ հարցը քննարկելիս դասին կկիրառեիք նիդերլանդացի նկարիչ Մորիս Էյշերի ստորև ներկայացված կոմպոզիցիան:



ա. Դատողություններ անենք գրաֆիկայի, որպես կերպարվեստի ճյուղի առանձնահատկությունների մասին

բ. Բացահայտենք և դատողություններ անենք պատմական երևույթի մասին, որը դարձել է ստեղծարարի ոգեշնչման աղբյուր

գ. Ոճական բնութագրիչների հիման վրա որոշենք արվեստի նմուշի պատկանելությունը կոնկրետ դարաշրջանին թե գեղարվեստական հոսանքին

դ. Քննարկենք արվեստի ստեղծագործությունը, որպես փոխաբերական և խորհրդանշական մտածողության արտահայտություն

17. Որոշեք ո՞րն է նկարիչ Մարսել Դյուշանի «Մերկ, աստիճանից իջնողը» նկարի ստեղծման համար կիրառած պատկերման հիմնական միջոցները:

ա. Ռիթմ և շարժում

բ.Ձև և հեռանկար

գ. Հեռանկար և հավասարակշռություն

դ. Համաչափություն և ամբողջականություն

18. Ո՞ր տերմինն է ավելի լավ արտահայտում գեղարվեստական աշխատանքի ոճը:

ա. Գեղանկարչական

բ. Վերացական

գ. Ակադեմիական

դ. Գծային

19. Ո՞ր գեղարվեստական հոսանքն է կիրառում իրական և անիրական տարրերի միաձուլումը ստեղծագործության մեջ:

ա. Իմպրեսիոնիզմ

բ. Սյուրռեալիզմ

գ. Ար-նուվո

դ. Էքսպրեսիոնիզմ.

20-25. առաջադրանք: ***«Ճշմարիտ է - Սխալ է»***

Առաջադրանքի հրահանգ–ուշադիր ծանոթացեք տրված դրույթներին,եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշեք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրեք ճիշտ ձևակերպումը:

Դիտողություն. Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը ինքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինին/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողեք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրեք նհամապատասխանեցրեք համարժեք տերմին և/կամ բառ:

Նմուշ.



20. Զգված հատակագծով ուղղանկյուն կառույցը, որը սյունաշարերի միջոցով բաժանված է երեք կամ հինգ նավերի կոչվում է Բազիլիկ:

21. Իսլամական արվեստը արգելում է պատկերել երկրաչափական ձևեր:

22.Նկարում պատկերի հստակ ուրվագծերի մեղմացում-մթագնումը կոչվում է իմպաստո:

23. Հունական ճարտարապետության մեջ սյունաշարերի երեք հիմնական տեսակ է հանդիպում՝ դորիական, իոնական, դասական:

24. Հավասարակշռությունը , ռիթմը, համամասնությունը կերպարվեստի միջոցներ են (սկզբունքներ) :

25. Ուղղանկյունաձև հատակագծով կառույցը, որը չորս կողմից շրջափակված է սյունաշարերով կոչվում է Պերիպտեր:

Առաջադրանք 26: ***Գործնական աշխատանք***

Հրահանգ - որպես օրինակ տրված է Անրի Մատիսի գրաֆիկական ուրվանկարը: Ըստ տրված օրինակի ստեղծեք կոմպոզիցիայի Ձեր ինտերպրետացիան: Միևնույն ժամանակ հարթային պատկերին տվեք ծավալ: Նախատեսելով կոմպոզիցիոն բաշխման սկզբունքները պատկերը համապատասխանորեն տեղավորեք նկարի հարթության վրա: Կոմպոզիցիան պատկերեք գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա:

Առաջադրանք 27-31: Ժամանակագրության սահմանում:

Առաջադրանքի հրահանգ – դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետական և կերպարվեստի նմուշները ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրանցեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

27. Դասավորեք Կլոդ Մոնեյի աշխատանքները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.

2.

3.

4.

28. Ժամանակագրական առումով դասավորեք գեղարվեստական ոճերը.

1. Բարոկկո
2. Մանիերիզմ
3. Դադաիզմ
4. Սիմվոլիզմ

29. Դասավորեք աշխարհիկ նշանակության ճարտարապետության հայտնի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.

2.

3.

4.

30. Դասավորեք միջնադարյան վրացական քրիստոնեական ճարտարապետության տեսակները ժամանակագրական հաջորդականությամբ :

1. Կենտրոնական գմբեթավոր
2. Եռակոնք
3. Քառակոնք
4. Կուպել Հալե

31. Ժամանակագրական առումով դասավորեք գարնան թեմայով ստեղծված հայտնի արվեստի նմուշները:

1.

2.

3.

4.

32: Համապատասխանության որոշում

Առաջադրանքի հրանահգ՝ A սյունակում տրված գեղարվեստա-ոճական բնութագրիչների թվարկացանկինհամապատասխանեցրեքB սյունակում տրված հոսանք/դարաշրջանը: Նկատառեք, որ մեկ բնութագրիչին համապատասխանում է միայն մեկ հոսանք և/կամ դարաշրջան:

A**Գեղարվեստա-ոճական բնութագրիչներ**	B **Հոսանք/դարաշրջան**
1. Կողք կողքի տեղադրված մաքուր, անխառն, տարբեր գույների արագ, կարճ վրձնախազեր, որոնք դիտողի աչքում իրար են խառնվում և ստեղծում են շարժման, ինչպես նաև լույսի էֆեկտ: 2. Կոմպոզիցիայի անկյունագծային կառուցվածք, լույս-ստվերի կտրուկ հակադրություն, կոմպոզիցիայի դինամիկ, լարված բնույթ 3. Գեղարվեստական ձևի լակոնականություն և պարզություն: Արտահայտիչ ժեստիկուլյացիա և չափազանցված, պայմանական ձևեր, մշակելու ազատ ձև:	ա. Իմպրեսիոնիզմ բ. Ար –նուվո գ. Վերածնունդ դ. Բարոկկո ե. Մոդեռնիզմ

33: Համապատասխանության որոշում

Առաջադրանքի հրահանգ –AA սյունակում տրված գեղարվեստական տեխնիկայի բնութագրիչների թվարկացանկինհամապատասխանեցրեքB սյունակում տրված գեղարվեստական տեխնիկան: Նկատառեք, որ մեկ բնութագրիչին համապատասխանում է միայն մեկ տեխնիկա:

Գեղարվեստական տեխնիկայի բնութագրիչները	Գեղարվեստական տեխնիկա
1. Չոր հիմնածեփի վրա տեմպերա ներկերով կատարված զարդանկար 2. Փայտյա մակերեսին փորագրած պատկերից ստացած դրոշմվածք 3. Թղթի, ստվարաթղթի,գործվածքի վրա մատիտով, ածուխով, կավճամատիտով (պաստել), սևաներկով (տուշ), սանգինայով, ջրաներկով և գուաշով ստեղծված պատկեր	ա. Գեղանկարչություն բ. Գրաֆիկա գ. Որմնանկար դ. Ա սեկկո ե. Փորագրություն

34. Արվեստի որոշ նմուշներ մտածված են, որպես մշակույթի, պատմության, պատմական փաստի մեկնաբանություն (ինտերպրետացիա): Տրված չորս նկարից թվարկացանկից ընտրեք արվեստի մեկ նմուշ և կապակցեք այն պատմական կոնկրետ երևույթի հետ: Վերլուծեք ստեղծագործությունը և որոշեք.

1.

2.

3.

4.

ա. Արտահայտչական և կոնտեքստուալ առանձնահատկությունները, որոնք բացահայտում են այս ստեղծագործության կապը ձեր կողմից նշված երևույթի հետ:

բ. Ո՞ր գեղարվեստական եղանակների միջոցով է հեղինակն արտահայտում ստեղծագործության գաղափարը:

35: Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն

Իմաստավորեք, վերլուծեք և գնահատեք ստորև տրված արվեստի նմուշը

Առաջադրանքը կատարեք ըստ նշումների.

35. 1Նկարագրեք և բնութագրեք կոմպոզիցիան. Ի՞նչ թեմայով է ստեղծված տրված կոմպոզիցիան, նյութի և տեխնիկայի հիման վրա բացահայտեք կերպարվեստի ո՞ր ճյուղի նմուշն է ներկայացված:

35.2 Վերլուծեք և հակիրճ ձևակերպեք ի՞նչ արտահայտչական միջոցներ և մեթոդներ է կիրառում հեղինակը նկարի վրա գեղարվեստական կերպարի բնույթ ստեղծելու համար:

35.3 Գեղարվեստա-ոճական բնութագրիչների հիման վրա սահմանեք աշխատանքի ստեղծման ժամանակը, որոշեք ո՞ր երկրի արվեստի նմուշն է ներկայացված, նշեք հեղինակի անունը:

35.4 Գնահատեք աշխատանքը - արտահայտեք սեփական վերաբերմունքը, դատողություններ արեք և հիմնավորեք Ձեր կարծիքը:

35.5 Դատողություններ արեք ազդեցությունների շուրջ, քննարկեք աշխատանքը պատմական-մշակութային և այլ համատեքստում: